ARMENIA EITI Extractive Industries Transparency Initiative

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2018 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## ՆԱԽԱԲԱՆ

2018 թվականի երրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեությունն ուղղված է եղել 2018թ. ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման նպատակով անկախ ադմինիստրատորի՝ «Էրնսթ ընդ Յանգ» աուդիտորական ընկերության ընտրության, Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի կազմման, ԱՃԹՆ-ի զեկույցի համար հանքարդյունահանող կազմակերպությունների և պետական մարմինների կողմից հրապարակային հաշվետվությունների ներկայացման էլեկտոնային համակարգի մշակման, դրա փորձարկման և գործարկման աշխատանքներն իրականացնելուն: Հրապարակային հաշվետվություններ ներկայացնողների համար անցկացվել է հանդիպում-դասընթաց, որի ժամանակ ներկայացվել են հրապարակային հաշվետվությունների ներկայացման կարգերը և էլեկտրոնային համակարգից օգտվելու ուղեցույցը:

ՀՀ վարչապետի 2018թ. հուլիսի 16-ի N 960-Ա որոշմամբ հաստատվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի կազմը: ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նախագահ է նշանակվել առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանը:

Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խումբը անցկացրել է 1 նիստ, որի ժամանակ ներկայացվել են ԲՇԽ-ի նոր անդամները և այլընտրանքային անդամները, կայացվել են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացի վերաբերյալ մի շարք որոշումներ:

Հաշվետու ժամանակահատվածում իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խումբն իրականացրել է Հայաստանի մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման իրավական հարցերը կարգավորող օրենքների նախագծերի փաթեթի մշակման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով հաստատված մի շարք միջոցառումներ, մասնավորապես, հանրային իրազեկման, Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի բովանդակության մշակման, 2017թ. ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվության անգլերեն թարգմանության ու այն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարությանը ներկայացնելու, միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքներ:

*Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017-2018թթ. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:*

# ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ-Ի 2018Թ. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

| ՆՊԱՏԱԿԸ | Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 2. **ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի ստեղծում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝*<br>ՀՀ ԱՃԹՆ-ի կայք, տվյալների բազաներ, տվյալների բազաների վերլուծության գործիքներ՝ տեղեկատվությունը մատչելի տեսքով և առցանց ներկայացնելու, հարցումներ կատարելու, տվյալներն ազատ տեսնելու համար, առցանց հաշվետվությունների ներկայացման պորտալի ձևավորում<br>*Վերջնաժամկետը՝*<br>2018թ. հունիս | ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ | Հաշվետու ժամանակահատ-վածում շարունակվել են ստեղծված գործիքները կատարելագործելու և թերությունների շտկման աշխատանքները |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 3. **Կայքի ընթացիկ սպասարկում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Կայքի ընթացիկ սպասարկում, թերությունների շտկում* | ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 4. **ԱՃԹՆ-ի կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվություններ ի, տեսագրությունների, արձանագրություննե րի հրապարակում կայքում)** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* կայքում հրապարակված հաշվետվություններ, տեսագրություններ, արձանագրություններ<br>*Վերջնաժամկետը՝*<br>ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 5. | **Արդյունքը և** | **Իրականացման** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| **Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում** | **վերջնաժամկետը** | **կարգավիճակը** | | |
|---|---|---|---|---|
| | *Արդյունքները*՝ տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի հաշվետվություն, ԲՇԽ-ի տարեկան հաշվետվություն, տեղեկատվական տեսաhոլովակներ *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 6. **Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով** (YouTube, Twitter, Facebook **և այլ ցանցեր**) | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝ սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն *Վերջնաժամկետը*՝ ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 8. **Հաղորդակցության ռազմավարության հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ հաղորդակցության ռազմավարություն *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մայիս | իրականացվել է | ԲՇԽ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 9. **Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝ կլոր սեղաններ, հանդիպումներ, այդ թվում՝ ազդակիր համայնքների ներկայացուցիչների հետ, հանդիպումներ կրթական հաստատությունների հետ *Վերջնաժամկետը*՝ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ քարտուղարություն | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ընթացիկ | | | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 2. ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի ստեղծում*

«Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի հետ շարունակվել են հրապարակային հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համակարգի գործարկման, դրա թեստավորման, օգտվողների կողմից հաշվետվությունները ներկայացնելու գործընթացում ի հայտ եկած խնդիրների շտկման աշխատանքերը: Հաշվետու ժամանակահատվածում «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի պատասխանատուները, անկախ ադմինիստրատորը և Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը ամենօրյա կտրվածքով հաշվետվություն ներկայացնող հանքարդյունահանող կազմակերպությունների և պետական մարմինների ներկայացուցիչներին տրամադրել են խորհրդատվություն համակարգում գրանցվելու, հրապարակային հաշվետվությունները լրացնելու, ստորագրելու և ներկայացնելու վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ն, անկախ ադմինիստրատորը և Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը անցկացրել են 3 հանդիպում ԱՃԹՆ-ի կայքում տվյալների բազաների ներկայացման ֆորմատների, ինչպես նաև հրապարակային հաշվետվությունների միջոցով ներկայացված տվյալները տարբեր ֆիլտրներ գործածելու հնարավորությամբ հանրությանը հասանելի դարձնելու համար գործիքների կառուցվածքը հաստատելու նպատակով:

*Միջոցառում 4. ԱՃԹՆ-ի կայքի համալրում համապատասխան տեղեկատվությամբ (հաշվետվությունների, տեսագրությունների, արձանագրությունների հրապարակում կայքում)*

Սկսվել են Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի կայքի բովանդակության զարգացման աշխատանքները, տեղադրվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների մասին տեղեկատվությունը, որը մինչ այդ հասանելի էր ՀՀ կառավարության պաշտոնական կայքի ԱՃԹՆ-ի ենթաէջում: Կայքում լրացվել է առանձին բաժինների վերաբերյալ տեղեկատվություն, տեղադրվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագիրը, եռամսյակային և 2017 թվականի հաշվետվությունները, ԲՇԽ-ի բոլոր նիստերի արձանագրությունները, իրավական ակտերը և համապատասխան այլ փաստաթղթեր, որոնք մշակվել են նախաձեռնությանն անդամակցելու ընթացքում: Կայքում տեղեկատվությունը ներկայացված է հայերեն և անգլերեն լեզուներով:

*Միջոցառում 5. Հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում*

Մշակվել է 2018 թվականի 2-րդ եռամսյակի ԱՃԹՆ-ի ներդրման հաշվետվությունը: Կայքում[1] հրապարակվել են հուլիսի 31-ին կայացած ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստում հաստատված՝ ԱՃԹՆ-ի ներդրման 2018 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվությունները: Հաշվետու եռամսյակում Հայաստանի ԱՃԹՆ-ի 2017 թվականի տարեկան հաշվետվության անգլերեն թարգմանությունը ևս հրապարակվել է կայքում[2]:

*Միջոցառում 6. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ քարոզչության իրականացում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, Facebook և այլ ցանցեր)*

Շարունակվել են պարբերաբար թարմացվել Facebook[3] և Twitter[4] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվել է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելիությունը լայն հանրության համար:

*Միջոցառում 8. Հաղորդակցության ռազմավարության հասփապրում*

Երևանում բրիտանական դեսպանատան ֆինանսավորմամբ իրականցվող ծրագրի շրջանակներում ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի (ՀԱՀ ՊՀԿ) կողմից ներկայացված ԱՃԹՆ-ի հանրային հաղորդակցության ռազմավարության լրամշակված նախագիծը հաստատվել ԲՇԽ-ի կողմից հուլիսի 31-ի կայացած ԲՇԽ-ի նիստին և հրապարակվել է կայքում[5]:

*Միջոցառում 9. Իրազեկության բարձրացման միջոցառումների իրականացում*

Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանը» դրամաշնորհային ծրագրի շրջանակում հուլիսի 10-ին Երևանի «Բեսթ Վեսթերն Կոնգրես» հյուրանոցում կայացել է հանդիպում-դասընթաց Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի համար ընդերքօգտագործողների և պետական մարմինների կողմից 2018թ. հունիսի 8-ի ՀՀ կառավարության N 666-Ն որոշման համաձայն հրապարակային հաշվետվությունները ներկայացնելու կարգի և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի գործածման վերաբերյալ: Հանդիպման մասնակիցները ծանոթացել են անկախ ադմինիստրատորի՝ «Էրնստ ընդ Յանգ» ՓԲԸ-ի ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման համար պատասխանատուների հետ: Հանդիպմանը պետական մարմինների և հանքարդյունահանող ընկերությունների ներկայացուցիչների

[1] https://www.eiti.am/hy/%D4%B5%D5%BC%D5%A1%D5%B4%D5%BD%D5%B5%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%BF%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80

[2] https://www.eiti.am/en/Quarterly-annual-reports/

[3] https://www.facebook.com/EITIArmenia/

[4] https://twitter.com/EITI_Armenia

[5] https://www.eiti.am/hy/%D5%A1%D5%B5%D5%AC

| |
|---|
| հետ ընթացել են աշխատանքային քննարկումներ:<br>Քննարկումների արդյունքում, ի հավելումն ՀՀ կառավարության N 666-Ն որոշման՝ անկախ ադմինիստարտորը կազմել և հրապարակային հաշվետվություններ ներկայացնողներին է տրամադրել հաշվետվությունների լրացման պարզաբանումների ուղեցույց[6]: |

| ՆՊԱՏԱԿԸ | Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 12. **Ճանապարհային քարտեզի նախագծի հանրային քննարկումներ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* ճանապարհային քարտեզի նախագծի հրապարակում, հանդիպումներ<br>*Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 14.1. **Իրական սեփականատերերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խմբի (ԱԽ) ստեղծում և օրենսդրական փաթեթի մշակման համար հանդիպումների իրականացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* միջգերատեսչական աշխատանքային խումբ, հանդիպումներ<br>*Վերջնաժամկետը՝* 2018թ. մարտ-մայիս | Իրականացվել է | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ, ԱԽ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 14.2. **Իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական փաթեթի շրջանառում և ներկայացում ՀՀ կառավարություն, այնուհետև ՀՀ Ազգային ժողով** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական փաթեթ<br>*Վերջնաժամկետը՝* 2018թ. մայիս-հոկտեմբեր | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ, ԱԽ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 14.3. **Իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական փաթեթի քննարկումներ շահագրգիռ կողմերի** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* հանդիպումներ<br>*Վերջնաժամկետը՝* 2018թ. ապրիլ-հոկտեմբեր | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ, ԱԽ | |

[6] https://www.eiti.am/file_manager/e-reporting%20templates/EY_EITI_Instructions.pdf

| | | | | |
|---|---|---|---|---|
| **հետ** | | | | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 14.1, 14.2, 14.3*

Հաշվետու ժամանակահատվածում միջգերատեսչական աշխատանքային խումբն անցկացրել է երկու հանդիպում: Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության, Արդարադատության նախարարության և ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ներկայացուցիչների կողմից լրամշակվել են «Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը, որոնք ներկայացվել են աշխատանքային խմբի քննարկմանը: Աշխատանքային խմբի կողմից քննարկվելուց հետո օրենքների փաթեթը ներկայացվել է ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամներին: Հուլիսի 31-ի կայացած ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստին ԲՇԽ-ն հաստատել է ՀՀ օրենքների փաթեթը, որն այնուհետև Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից շրջանառվել է ՀՀ պետական մարմինների միջև դիտողությունների և առաջարկությունների ներկայացման նպատակով: Օրենքների փաթեթը տեղադրվել է[7] նաև e-draft.am պորտալում՝ այն հանրության համար հասանելի դարձնելու և հանրության կողմից նկատառումներ ստանալու նպատակով: Պորտալում օրենքների փաթեթը դիտվել է 318 անգամ, հանրության կողմից նկատառումներ չեն ստացվել, սակայն գերակշիռ հատվածը կողմ է քվեարկել նախագծերին: Պետական մարմինների կարծիքները ստանալուց և նախագծերը լրամշակելուց հետո Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից փաթեթը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ այն կառավարության նիստում ներկայացնելու նպատակով: Վարչապետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներից ստացված առաջարկությունների և դիտողությունների քննարկման արդյունքում քարտուղարությունը վերջնական լրամշակված տարբերակները ներկայացրել է նախանիստի հաստատման:

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ՆՊԱՏԱԿԸ** | **ՀՀ իրավական դաշտի ուսումնասիրություն, ԱՃԹՆ-ին անհամապատասխանությունների և բացերի բացահայտում** | | | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 16. **Օրենսդրության** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

[7] https://www.e-draft.am/projects/1048

| | | | | |
|---|---|---|---|---|
| **ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում** | *Արդյունքները*՝ հաշվետվություն, գործողությունների պլան *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մայիս | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 17. **Հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մայիս | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 18. **ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և գործողությունների պլանի քննարկում և հաստատում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ հաշվետվություն, գործողությունների պլան *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հունիս | Իրականացվել է | ԲՇԽ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N18.1. **ԱՃԹՆ-ի հետագա զեկույցներում ֆինանսական հոսքերը ծրագրերի (յուրաքանչյուր արդյունահանման թույլտվության) մակարդակով ներկայացման հնարավորությունների վերաբերյալ ուսումնասիրություն և այդ, ինչպես նաև ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի առաջարկությունների իրականացման համար ճանապարհային քարտեզի մշակում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները*՝ ուսումնասիրություն, ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը*՝ 2018թ. հունիս-նոյեմբեր | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, Անկախ ադմինիստրատոր | |

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ |
|---|
| *Միջոցառում 16. Օրենսդրության ուսումնասիրություն, բացերի բացահայտում, դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացում*<br>*Միջոցառում 17. Հաշվետվության և գործողությունների պլանի ներկայացում ԲՇԽ-ին*<br>*Միջոցառում 18. ԲՇԽ-ի կողմից հաշվետվության և գործողությունների պլանի քննարկում և հաստատում* |

Երևանում բրիտանական դեսպանատան ֆինանսավորմամբ իրականցվող ծրագրի շրջանակներում ՀԱՀ ՊՀԿ-ի կողմից ներկայացվել է ԱՃԹՆ-ի օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության լրամշակված վերջնական տարբերակը՝ որում որոշ չափով հասցեագրված են 15 գերատեսչությունների (նախարարություններ, մարզպետարաններ, Կենտրոնական բանկ, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով), ԱՃԹՆ-ի քարտուղարության և ԲՇԽ-ի կողմից ներկայացված կարծիքները: ԲՇխ-ի նիստին ԲՇԽ-ն հանաձայնության է եկել հաստատել վերլուծության լրամշակված տարբերակը:

*Միջոցառում 18.1. ԱՃԹՆ-ի հետագա զեկույցներում ֆինանսական հոսքերը ծրագրերի (յուրաքանչյուր արդյունահանման թույլտվության) մակարդակով ներկայացման հնարավորությունների վերաբերյալ ուսումնասիրություն և այդ, ինչպես նաև ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի առաջարկությունների իրականացման համար ճանապարհային քարտեզի մշակում*

ԲՇԽ-ի նիստում քննարկվեց ԱՃԹՆ-ի զեկույցում ներկայացվող հարկերի և վճարների հոսքերը ծրագրի մակարդակով ներկայացնելու հնարավորության հարցը: Ներկայացվեց, որ առկա են մի շարք բարդություններ. համաձայն ՀՀ ոլորտային օրեսդրության՝ մի շարք հարկատեսակների ու վճարների համար անհնար է ծրագրի մակարդակով տվյալների ներկայացումը, կազմակերպությունների մի շարք ծախսումներ հնարավոր չէ վերագրել որևէ ծրագրի կամ թույլտվության: Որոշվեց, որ 2018 թվականի զեկույցի համար հաստատված հաշվետվություններում բոլոր այն ֆինանսական հոսքերը, որոնք ներկայումս հնարավոր է ներկայացնել արդյունահանման թույլտվությունների մակարդակով, ներկայացվելու են այդ մակարդակում: Առաջարկվեց՝ անկախ ադմինիստրատորից զեկույցում ստանալ հարցի վերաբերյալ որոշակի վերլուծություն և առաջարկներ, որի հիմքով կիրականացվեն աշխատանքային քննարկումներ պարզելու՝ ապագայում լրացուցիչ որ հոսքերը կարող են ներկայացվել ծրագրերի մակարդակով: ԲՇԽ-ն որոշեց, որ ներկայումս որպես ծրագիր կդիտարկվի ընդերքօգտագործման իրավունքով (թույլտվությամբ) իրականացվող գործունեությունը:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրություն և ԱՃԹՆ-ին և պատասխանատու հանքարդյունաբերության լավագույն միջազգային փորձին համապատասխանեցման ճանապարհային քարտեզի մշակում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 20. **Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը*՝ ճանապարհային քարտեզ *Վերջնաժամկետը*՝ 2018թ. մայիս | Ընթացիկ | ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀԱՀ ՊՀԿ | |

| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 21. **Ճանապարհային քարտեզի հաստատում ԲՇԽ-ի կողմից** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
|---|---|---|---|---|
| | *Արդյունքները՝* գործողությունների պլան, բյուջե *Վերջնաժամկետը՝* 2018թ. մայիս | Չի իրականացվել | ԲՇԽ | ԲՇԽ-ի կազմի փոփոխությունների պատճառով համապարփակ ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները հետաձգվել են: |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 20. Ճանապարհային քարտեզի մշակում միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով*

Հուլիսի 31-ին կայացած ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստին ԲՇԽ-ն որոշեց վերանայել ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի կազմը (հավելված) և, հիմք ընդունելով Օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության մաս հանդիսացող ճանապարհային քարտեզը, Բնապահպանության նախարարության ԲՇԽ-ի անդամի գլխավորությամբ սկսել ՀՀ ԱՃԹՆ-ի՝ Հայաստանի Հանրապետությունում պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները: Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրման ճանապարհային քարտեզի միջոցառումների առաջարկությունների ներկայացման ձևաչափ, որը ԱՃԹՆ-ի օրենսդրական և ինստիտուցիոնալ վերլուծության հետ միասին տրամադրվել է ԲՇԽ-ի անդամներին, ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի անդամներին, համայնքերին և շահագրգիռ մարմիններին՝ առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

*Միջոցառում 21. Ճանապարհային քարտեզի հաստատում ԲՇԽ-ի կողմից*

Միջոցառում 20-ով նախատեսված աշխատանքների արդյունքում ձևավորված ճանապարհային քարտեզը կներկայացվի ԲՇԽ-ի քննարկմանը:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **Հայաստանի ԱՃԹՆ-ի թեկնածության կարգավիճակի ապահովում** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 38. **Դոնոր** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **կազմակերպությունների հետ համագործակցություն** | *Արդյունքը՝* դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 42. **ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, տարեկան)** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* հաշվետվություններ *Վերջնաժամկետը՝* եռամսյակը մեկ | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | 2018թ. առաջին եռամսյակային հաշվետվության նախագիծը չի հաստատվել ԲՇԽ-ի կողմից, քանի որ հաշվետու ժամանակահատվածում չի հրավիրվել ԲՇԽ-ի նիստ: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 43. **Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքները՝* գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 44. **Մասնակցություն ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսների** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ԲՇԽ, ՀՀ կառավարության աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 45. **ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի անցկացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստեր *Վերջնաժամկետը՝* եռամսյակը մեկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ | Իրականացվել է ԲՇԽ-ի հանդիպում առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | հետ |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 49.1. **ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների կարողությունների հզորացում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* դասընթացներ, աշխատաժողովներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | |

**ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Միջոցառում 38. Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն*

Հաշվետու եռամսյակում շարունակվել են միջազգային գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի միջոցառումների իրականացումը: Հայաստանի ԱՃԹՆ-ի գործընթացին ապագա աջակցության համատեքստում ԱՃԹՆ-ի քարտուղարությունը անցկացրել է հանդիպումներ GIZ-ի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն:

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը հանդիպել է Համաշխարհային բանկի հանքարդյունաբերության առաջատար մասնագետ Կրիստեն Հունդի հետ: Հանդիպման ժամանակ ներկայացվել են Համաշխարհային բանկի «Աջակցություն Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանը» դրամաշնորհային ծրագրի շրջանակում Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների ընթացքը:

ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության ներկայացուցիչը մասնակցել է Հանքարդյունաբերության քաղաքականության մշակման ծրագրի վերաբերյալ Համաշխարհային բանկի գրասենյակում կայացած հանդիպմանը, որտեղ քննարկվել են քաղաքականության մշակման անհրաժեշտության հարցեր, հնարավոր մոդելներն ու միջազգային փորձը:

*Միջոցառում 42. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ-ի ներդրման աշխապանքների, գործողությունների պլանի մոնիթորինգի վերաբերյալ հաշվետվությունների կազմում (եռամսյակային, կիսամյակային, տարեկան)*

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018թ. երկրորդ եռամսյակի հաշվետվությունը:

*Միջոցառում 45. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստերի անցկացում*

Հուլիսի 31-ին տեղի ունեցավ ԲՇԽ-ի նիստ, որի ժամանակ առաջին փոխվարչապետ, ԲՇԽ-ի նախագահ Արարատ Միրզոյանը ներկայացրեց ԲՇԽ-ի նոր անդամներին՝ Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանին, Արդարադատության նախարարի տեղակալ Սուրեն Քրմոյանին, Ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողասյանին՝ որպես այլընտրանքային անդամ, ԲՇԽ-ի

արդյունահանող ընկերությունների խմբակցության այլընտրանքային անդամներ «ԱՍՍԱԹ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Արամ Օսիկյանին, Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Անդրանիկ Աղաբալյանին, «Թեղուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ Դավիթ Թադևոսյանին և «Մեղրաձոր գոլդ» ՍՊԸ-ի գլխավոր հաշվապահ Մանվել Եղիազարյանին: ԲՇԽ-ի խմբակցությունները նոր անդամներին և այլընտանքային անդամներին ընտրել են անկախ ընթացակարգով՝ համաձայն ԱՃԹՆ-ի ստանդարտի և ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի պահանջների: Նիստին ԲՇԽ-ի անդամներին ներկայացվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցը կազմող աուդիտորական ընկերությունը՝ անկախ ադմինիստրատորը, քննարկել են զեկույցի կազմման վերաբերյալ մի շարք հարցեր և կայացվել համապատասխան որոշումներ: Նիստի արձանագրությունը[8] հրապարակվել է կայքում:

*Միջոցառում 43. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի անդամ այլ երկրների հետ*

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ վարչապետի աշխատակազմի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը համագործակցել է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման և ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման հետ կապված մեկնաբանությունների և խորհրդատվության ստացման նպատակով: Կազմակերպվել են մի շարք տեսազանգեր, որոնց ընացքում քննարկվել են ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների առաջընթացը, ինչպես նաև ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից բարձրացված հարցեր առցանց հաշվետվության համակարգի ներդրման, իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի իրականացման, տարեկան հաշվետվության անգլերեն թարգմանության, զեկույցի կազմման և ներկայացման վերաբերյալ:

*Միջոցառում 44. Մասնակցություն ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսների*

Միջազգային քարտուղարության հրավերով ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լիլիա Շուշանյանը և Արդարադատության նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման բաժնի պետ Մարիամ Գալստյանը հուլիսի 18-19-ը մասնակցել են Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում անցկացվող Իրական սեփականատերերի բացահայտման թեմայով աշխատաժողովին: Լիլիա Շուշանյանը հուլիսի 18-ին կայացած կլոր-սեղան քննարկմանը ներկայացրել է Հայաստանի կողմից ձեռնարկված քայլերը, իսկ հուլիսի 19-ին Մարիամ Գալստյանը ներկայացրել է Հայաստանում եկամուտների հայտարարագրման համակարգը: Աշխատաժողովի ընթացքում քննարկվել են մշակման ընթացքում գտնվող նախագծերի առանձին դրույթների վերաբերյալ հարցեր և ուսումնասիրվել է գործընկեր պետությունների փորձառությունը:

[8] https://www.eiti.am/hy/agenda-protocols-other-related-documents

*Միջոցառում 49.1. ԲՇԽ-ի և շահագրգիռ մարմինների ներկայացուցիչների կարողությունների հզորացում*

Ներկայացված է Միջոցառում 9-ում:

| **ՆՊԱՏԱԿԸ** | **ԱՃԹՆ-ի ստանդարտին համապատասխան ամբողջական հաշվետվություն** | | | |
|---|---|---|---|---|
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 53.1. **ԱՃԹՆ-ի զեկույցի մշակում** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* ԱՃԹՆ-ի զեկույց<br>*Վերջնաժամկետը՝* 2018թ. մայիս-օգոստոս | Ընթացիկ | Անկախ ադմինիստրատոր, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն | ԱՃԹՆ-ի խորհուրդը որոշում է ընդունել հետաձգել Հայաստանի կողմից 2018թ. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի հրապարակման վերջնաժամկետը՝ մինչև 2019թ. մարտի 9-ը: |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 56. **ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ ուսուցում պետական գերատեսչություններ և արդյունահանող կազմակերպությունների համար** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Արդյունքը՝* ուսուցում<br>*Վերջնաժամկետը՝* 2018թ. մայիս-հունիս | Իրականացվել է | ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ՀՀ պետական գերատեսչություններ, անկախ ադմինիստրատոր | |
| **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ** N 59. **Թարգմանչական աշխատանքներ** | **Արդյունքը և վերջնաժամկետը** | **Իրականացման կարգավիճակը** | **Պատասխանատուները** | **Նշումներ** |
| | *Վերջնաժամկետը՝* ընթացիկ | Ընթացիկ | | |
| **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** | | | | |

*Միջոցառում 53.1. ԱՃԹՆ-ի զեկույցի մշակում*

2018թ. հուլիսի 16-ին Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. զեկույցը կազմող կազմակերպության (անկախ ադմինիստրատոր), «Էրնսթ ընդ Յանգ» (“Ernst&Young”) ՓԲԸ-ի հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր:

2018թ. օգոստոսի 11-ին անկախ ադմինիստարտորը տրամադրել է Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցի մեկնարակային հաշվետվության նախագիծը, որի վերաբերյալ անկախ ադմինիստատորին են ներկայացվել ԲՇԽ-ի, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության դիտարկումները: Անկախ ադմինիստրատորը մեկնարկային հաշվետվության վերջնական տարբերակը տրամադրել է սեպտեմբերի 11-ին, որն ընդունվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից:

2018թ. օգոստոսի 23-ին անկախ ադմինիստարտորը ներկայացրել է Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցի կոնտեքստային հաշվետվության նախնական նախագիծը: Նախագծի կազմման աշխատանքների համակարգված ընթացքն ապահովելու նպատակով ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության նախաձեռնությամբ համապատասխան պետական մարմիններում նշանակվել են պատասխանատուներ, ովքեր պետք է համագործակցեին անկախ ադմինիստրատորի հետ՝ կոնտեքստային հաշվետվության մշակման և տեղեկատվության տրամադրման նպատակով: Նախնական կոնտեքստայի հաշվետվության վերաբերյալ ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության դիտարկումները նույնպես ներկայացվել են անկախ ադմինիստատորին:

Հաշվետու ժամանակահատվածում 27 ընդերքօգտագործողները, Բնապահպանության նախարարությունը, Պետական եկամուտների կոմիտեն և տարածքային կառավարման և զարգացման նախարարության միջնորդությամբ համայնքերը էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել են 2016 և 2017 թվականների հրապարակային հաշվետվությունները: Անկախ ադմինիստրատորը, համաձայն ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշմամբ սահմանված կարգի, իրականացրել է հաշվետվությունների ստացման, ընդունման և համադրման աշխատանքները:

*ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 56. ԱՃԹՆ-ի զեկույցի համար ներկայացվող հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ ուսուցում պետական գերատեսչություններ և արդյունահանող կազմակերպությունների համար*

Անկախ ադմինիստրատորը մի շարք հանդիպումներ է ունեցել Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության հետ, որոնց ընթացքում պարզաբանվել են անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքով սահմանված՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցի կազմման, դրանում տեղեկատվության ընդգրկման ԲՇԽ-ի կողմից հաստատված շրջանակին, հանքարդյունահանող ընկերությունների և պետական մարմինների կողմից հաշվետվությունների ներկայացման ընթացակարգի, հաշվետվությունների բովանդակության հետ կապված հարցեր: Հուլիսի 10-ին տեղի է ունեցել հանդիպում-դասընթաց Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի համար հաշվետվություններ ներկայացնող ընդերքօգտագործողների և պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ մասնակիցներին ուսուցանվել է հրապարակային հաշվետվությունների լրացման և ներկայացման կարգը:

*Միջոցառում 59. Թարգմանչական աշխատանքներ*

Հաշվետու ժամանակահատվածում Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կնքվել է պայմանագիր թարգմանչի հետ թարգմանչական ծառայություններ մատուցելու նպատակով: Թարգմանվել է 2017թ. ԱՃԹՆ-ի տարեկան հաշվետվությունը: Աշխատանքն ընդունվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից:

*Հավելված*

| ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-Ի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ | | |
|---|---|---|
| **Հ/Հ** | ***Անուն ազգանուն, պաշտոն*** | ***Կոնտակտային տվյալներ*** |
| 1. | Իրինա Ղափլանյան, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ | first.deputy-minister@mnp.am |
| 2. | Վարդան Գևորգյան, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ | vgevorgyan@minenergy.am |
| 3. | Արմեն Ստեփանյան, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կայուն զարգացման գծով փոխնախագահ | armen@lydianinternational.co.uk |
| 4. | Վահե Վարդանյան, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, «Գեոմայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գլխավոր տնօրեն | vahe.vardanyan@gmail.com |
| 5. | Սոնա Այվազյան, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն | sona@transparency.am |
| 6. | Հարություն Մովսիսյան, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ | harutyunmovsisyan84@gmail.com |
| 7. | Արթուր Համբարձումյան, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, «Հասարակական ձայն» հասարակական կազմակերպության խորհրդի անդամ | artur.hambardzumyan.69@mail.ru |
| 8. | Օրի Ալավերդյան, Ֆինանսների նախարարության աշխատակազմի եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ | ori.alaverdyan@minfin.am |
| 9. | Վիգեն Ավետիսյան, Բնապահպանության նախարարության Ընդերքի և հողերի պահպանության քաղաքականության վարչության պետ | vig-avetisyan@yandex.ru |
| 10. | Տաթևիկ Սարուխանյան, Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության առաջատար մասնագետ | tatevsarukhanyan@mail.ru |
| 11. | Փառանձեմ Դարբինյան, Տարածքային կառավարման վարչության տարածքային զարգացման պլանավորման | p.darbinyan@mta.gov.am |

| | | |
|---|---|---|
| | բաժնի առաջատար մասնագետ | |
| 12. | Հրաչյա Մուրադյան, Պետական եկամուտների կոմիտեի Վարչարարության մեթոդաբանության ընթացակարգերի և սպասարկման վարչության պետ | hrachya_muradyan@taxservice.am |
| 13. | Շուշանիկ Քերոբյան, անկախ փորձագետ, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Երկրաբանության, նորմատիվամեթոդական և վերլուծության բաժնի պետ | sh.kerobyan@gmail.com |
| 14. | Հրանտ Ավետիսյան, Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ընդերքաբանական փորձաքննության և պաշարների հաստատման բաժնի պետ | a.hrant@mail.ru |
| 15. | Արմեն Եգանյան, Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Ճյուղային տնտեսական քաղաքականության վարչության պետ | aeganyan@mineconomy.am |
| 16. | Նանե Պասկևիչյան, «Էկոլոգիական իրավունք» ՀԿ | nanepaskevichian@gmail.com |
| 17. | Շահեն Խաչատրյան, ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների ամբիոնի վարիչ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ | sh_khach@inbox.ru |
| 18. | Ալեն Ամիրխանյան, ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն | alen@aua.am |
| 19. | Լուսինե Թովմասյան, ԱՃԹՆ-ի քարտուղարության փորձագետ | lusine.tovmasyan@gov.am |
| 20. | Լիլիա Շուշանյան, ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար | lilya.shushanyan@gov.am |